Եղեգնաձորի Հովհաննես

Հովհաննիսյանի անվան թիվ 2

հիմնական դպրոց

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա:**Ինչպես ընթերցանության կարողություններին նպաստող արդյունավետ դաս պլանավորել**

Ուսուցիչ:**Մխիթարյան Մարգարիտա**

Ղեկավար:**Խալաթյան Աիդա**

Եղեգնաձոր 2023

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԻՆՉՊԵՍ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՊԱՍՏՈՂ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՍ ՊԼԱՆԱՎՈՐԵԼ 5
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՄԻՋԱՎԱՅՐ 6
ՈՒՂՂՈՐԴՎԱԾ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ 8
ԽՄԲԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 9
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԸ 10
ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ 11
ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ 12
ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ ԽՄԲԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻՑ 13
ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ 15
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 17
Գրականության ցանկ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գաղտնիք չէ, որ ինքնուրույն ընթերցանության դասերի կազմակերպումը շատերի համար այսօր էլ դժվարություն է ներկայացնում:Ի տարբերություն մայրենիի դասերի , որտեղ հստակ նշվում է թեման, դասանյութը, նրանից բխող հարցերն ու առաջադրանքները, ինքնուրույն ընթերցանության դասաժամն ուսուցիչն ինքը պետք է պլանավորի և կառուցի:Խոսքը բոլորովին էլ այն մասին չէ ,որ դասաժամի ընթացքում պետք է աշակերտներին ուղղակի հանձնարարել ինչ որ բան ինքնուրույն կարդալ:Իմ կարծիքով այն որևէ կերպ չպետք է զիջի մայրենիի մյուս դասերին,որոնց ընթացքում բացի կարդալուց, պատմելուց,մենք բազմաբնույթ այլ աշխատանքներ ենք կատարում:Ինքնուրույն ընթերցանության դասաժամերը պետք է սպասված լինեն աշակերտների կողմից:Դրանք մեր կողմից պետք է կազմակերպվեն այնպես ,որ լինեն հետաքրքիր, ուսուցանող և ծառայեն իրենց նպատակին:

Մանկավարժական գործունեությանս ողջ ընթացքում աշխատում եմ դաստիարակել գրին ու գրականությանը նվիրված, ընթերցասեր երեխաներ:Ընթերցանության դասերն աշխատում եմ կազմակերպել այնպես, որ երեխաները վարժ կարդալ սովորեն,որ ընթերցանությունը հաճույք պատճառի նրանց և միաժամանակ տեղեկատվություն տա:Կարդալ և գրել սովորելով երեխաները մուտք են գործում մեծահասակների աշխարհ, ավելի են համոզվում ,որ ձեռք բերելով գրելու և կարդալու հմտություններ, դառնում են ավելի ինքնուրույն և անկախ:Նշեմ, որ անցնելով դասարանից դասարան փոխվում են երեխաների կարդալու դրդապատճառները:Եթե սկզբում նրանք սովորում են կարդալ, գրել, ապա հետո դա անում են ինչ որ բան սովորելու նպատակով:Նրանք սկսում են բավականություն ստանալ կարդալուց և գրելուց, դառնում են ավելի փորձառու:Ամեն պահի ես երեխաներին ցուցադրում եմ գրագիտության նպատակն ու օգտակարությունը:Իմ դասարանը ձեռագիր և տպագիր բառերով հագեցած մի միջավայր է ,որտեղ երեխաներն ամեն րոպե առնչվում են կարդալուն և գրելուն:Ես ամեն օր բարձրաձայն ընթերցում եմ երեխաների համար՝ընթերցանության նկատմամբ սեր առաջացնելու նպատակով:Հնարավորություն եմ տալիս երեխաներին ինքնուրույն ընթերցելու և գրելու, հաղորդակցվելու միմյանց հետ՝կիսելով կարդացածի և գրածի մասին իրենց տեսակետները:Համատեղ և ուղղորդված ընթերցանության դասերը, որևէ թեմայի շուրջ գրելը ,այն մյուսներին ներկայացնելը երեխաներին սովորեցնում է

խիզախել և ինքնարտահայտվել, սիրել գիրքը, լինել ուշադիր ունկնդիրներ,կարողանալ հեշտությամբ հարցեր տալ, գրել սեփական նպատակների համար և հասկանալ գրածի իմաստը:

Ես բարձր ակնկալիքներ ունեմ յուրաքանչյուր աշակերտից և հավատում եմ , որ նրանցից յուրաքանչյուրը կարող է հասնել հաջողության:

ԻՆՉՊԵՍ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՊԱՍՏՈՂ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՍ ՊԼԱՆԱՎՈՐԵԼ

Երկարամյա աշխատանքի արդյունքում ես արդեն համոզվել եմ ,որ մայրենիի դասերի ընթացքում կիրառելով քննադատական մտածողության զարգացմանը նպաստող աշակերտակենտրոն մեթոդներ ու հնարներ՝կրտսեր դպրոցականներն էլ կարող են սովորել քննադատաբար մտածել, լինել իրենց ուսումնառության գործընթացի ակտիվ դերակատարները, համագործակցել դասընկերների հետ ,դառնալ ակտիվ մտածող անհատներ:Գաղտնիք չէ ՝դպրոցում դասավանդվող յուրաքանչյուր առարկայի ծրագրով նախատեսված գիտելիքների և կարողությունների սահմանը երբեք չի կարող իր մեջ ընդգրկել տվյալ գիտության ողջ նվաճումները:Առարկայական ծրագրերում տրվածը միայն այն հիմնականն է , որն անհրաժեշտ է գիտության տվյալ ճյուղի մասին ընդհանուր գաղափար կազմելու համար, իսկ մնացածը սովորողներն իրենք պետք է աստիճանաբար, ինքնուրույն կերպով ձեռք բերեն շրջապատից և գրքերից, մանավանդ՝ ինքնուրույն ընթերցանությունից:

Ընթերցասիրություն, ընթերցողական ճաշակ, կարդացածի վերաբերյալ եզրահանգումներ կատարելու կարողություններ, անձնային բարձրարժեք որակների զարգացում, գրագետ ընթերցողի, կարդալու պահանջմունք ունեցող քաղաքացու դաստիարակում. ահա թե ինչ կարող է սովորողների մեջ սերմանել ինքնուրույն ընթերցանությունը:Հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ երեխաների մեծամասնության մոտ ձևավորվում է վաղ մանկության շրջանում, երբ երեխան վերցնում է քրոջ կամ եղբոր դասագիրքը և ուզում է կարդալ:Նա տեսնում է , որ հայրիկը , մայրիկը, տատիկն ու պապիկը կարդում են , քույրն ու եղբայրը՝ նույնպես, մտածում է , որ դա այդքան էլ դժվար չէ և ոչ էլ ցավոտ մի գործողություն, ուրեմն ինքն էլ կարող է կարդալ:Սովորաբար դպրոցի առաջին տարին այն ժամանակաշրջանն է , երբ երեխաներն արդեն լրջորեն ձեռնամուխ են լինում այդ գործին:ՔՄՁԿԳՄ ծրագիրը հստակ մատնանշում է այն ռազմավարությունները, որոնց օգնությամբ կարող ենք երեխաներին կապել գրքին, դաստիարակել ընթերցասեր աշակերտներ, ընթերցանությունը երեխաների համար դարձնել հաճելի ժամանց:

Դպրոց ոտք դնող երեխան մի մաքուր էջ չէ, որի վրա ուսուցիչը կարող է ազատ գրել: Նա դպրոց է գալիս ունենալով հասարակական փորձ և այդ փորձը կարող է լինել բազմազան:Նշենք միայն այն, ինչն անմիջականորեն առնչվում է ընթերցանությանը: Մի ընտանիքում հնարավոր է մեծերը երեխաների համար ընթերցել են շատ գրքեր և տանը շատ գրքեր կան:Նա կարող է տեսած լինել, որ իր ծնողները գործի բերումով շարունակ գրում ու կարդում են, իսկ մի ուրիշ փոքրիկ այդ նույն բանը հազվադեպ է տեսել, կամ բոլորովին չի տեսել:Այս երկու տեսակի փորձություններն էլ թանկ են երեխաների համար, որովհետև ծնողներն իրենց համար գրագետ լինելու չափանիշ են:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՄԻՋԱՎԱՅՐ

Շատ կարևոր է, որ երեխաների առաջին ջանքերը խրախուսվեն ուշադիր ու հոգատար ուսուցչի կողմից:ՈՒսուցիչը երեխաների համար պետք է ստեղծի տպագիր նյութերով հարուստ միջավայր:Գրքերը և այլ տպագիր նյութերը դասարանում մշտապես օգտագործվող նյութերի շարքում պետք է առաջին տեղում լինեն: Իմ դասարանական գրադարանում ընթերցանության հարուստ նյութեր կան:Գունավոր պաստառները, աշակերտների հասակին համապատասխան կահույքը գրավում է երեխաներին,և նրանք ավելի հաճախ և հաճույքով են կարդում:

Գրադարանում կա պատմվածքների, հեքիաթների, պիեսների, բանաստեղծությունների մեծ ընտրանի:Այն օգնում է թե՛ մեծ խմբով, թե՛ փոքր խմբերով և թե՛ անհատական ընթերցանություն կազմակերպելուն:Իմ դասասենյակը լիովին համապատասխանում է խմբերով ընթերցանություն կազմակերպելուն, խմբերի համար անհրաժեշտ նյութեր տեղադրելուն,աշակերտների միջև (դեմառդեմ) փոխներգործություն կազմակերպելու համար:Ես ամեն օր ընթերցում եմ նրանց համար, օրինակ եմ ծառայում, ուղղություն տալիս, ցուցադրում և զանազան այլ ռազմավարություններ կիրառելով սեր եմ արթնացնում ընթերցանության նկատմամբ:Աշխատում եմ երեխաների ուշադրությանը ներկայացնել ինչպես հարազատ մշակույթից վերցված, այնպես էլ այլ մշակույթներից կամ ավանդություններից վերցված հանրահայտ ստեղծագործություններ:Ընտրում եմ այնպիսի գործեր ,որոնք բորբոքեն երեխաների երևակայությունը,բուռն զգացմունքների տեղիք տան և համապատասխանեն նրանց տարիքին և փորձառությանը:

Ընթերցանությունը տևական գործընթաց է և այն հենց առաջին դասարանից հարկավոր է հավասարակշռել չորս կարևոր բաղադրիչների միջոցով, որոնք են ՝բարձրաձայն, համատեղ, ուղղորդված և ինքնուրույն ընթերցանությունները:Անհրաժեշտ է հետևողականորեն կիրառել վերը նշված ընթերցանության տեսակները ,որի արդյունքում երեխաները կարող են ինքնուրույն

ընտրել գիրք և կարդալ:Մի բան պարզ է , որ այսօր երեխաները քիչ են կարդում:Դա էլ իր բացատրությունն ունի:Տեխնիկապես հագեցած մեր դարում հեռուստացույցը , համակարգիչը և այլ ժամանակակից սարքերը փոխարինում են գրեթե ամեն ինչին:Այնուամենայնիվ անկախ ժամանակից և պայմաններից գրագետ և խելացի անհատի ձևավորման գործում գրքերը մնում են առաջին տեղում:ՈՒրեմն ինչպե՞ս երեխաների մեջ սեր արթնացնենք ընթերցանության հանդեպ: Ես իմ գործընկերներին միշտ հորդորում եմ դասարանում ունենալ գրադարան,կազմակերպել սիրած գրքի օր, երեխաներին գրանցել դպրոցական գրադարանում, ամեն օր կարդալ երեխաների համար և անպայման հաջորդ օրվա համար շարունակություն թողնել կարդալու:Հետաքրքիր և արդյունավետ ինքնուրույն ընթերցանության հիմքը դրվում է հենց առաջին դասարանում:Եթե առաջին և երկրորդ դասարաններում դա իրականացնում ենք համատեղ ընթերցանությամբ,բարձրաձայն նրանց համար ընթերցելով, ապա երրորդ և չորրորդ դասարաններում դրանք իրենց տեղը զիջում են փոխներգործուն,ուղղորդված և ինքնուրույն ընթերցանությանը:

ՈՒՂՂՈՐԴՎԱԾ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինքնուրույն ընթերցանության դասերին ես հաճախ եմ կիրառում ուղղորդված ընթերցանություն:ՈՒղղորդված ընթերցանության ժամանակ ես աշխատում եմ աշակերտների փոքր խմբերի հետ:Խմբերում ընդգրկում եմ 4-6 աշակերտի:Ի՞նչ ձևով եմ խմբավորում երեխաներին:Ես աշխատում եմ ձևավորել միանման կարողություններ ունեցող աշակերտների խմբեր:Դա անշուշտ ունի իր նպատակը:Բոլորս գիտենք, որ դասարանում կան տարբեր կարողությունների տեր երեխաներ,այդ պատճառով ես ուսուցումը կազմակերպում եմ այնպես,որ բավարարեմ յուրաքանչյուր աշակերտի անհատական կարիքները:Եվ քանի որ ամենօրյա դիտարկումների արդյունքում ես արդեն պարզել եմ յուրաքանչյուր աշակերտի կարողություններն ու անհատական կարիքները, ուստի նման խմբեր ձևավորելն ինձ համար դժվարություն չի ներկայացնում:Խմբերի այս տեսակ ձևավորումն ունի իր նպատակը,այն է՝ ընտրված գիրքը համապատասխանում է տվյալ խմբի անդամների ընթերցանության մակարդակին և նրանց ուժերի սահմաններում է :Իմ աշակերտների մեծ մասը վարժ և արագ է կարդում,մյուսները՝ քիչ դանդաղ,մի քանիսն էլ ՝դժվարությամբ:Եվ եթե ես

ամբողջ դասարանին հանձնարարեմ կարդալ նույն տեքստը, ապա ինչպես սովորաբար լինում է ,մի մասն արագ կկարդա, կվերջացնի, հետո կձանձրանա,կսկսի խանգարել մյուսներին, ովքեր դեռ տեքստի կեսն են կարդացել,մի մասն էլ դեռ մի քանի տող է կարդացել:Անշուշտ դասարանում աղմուկ կտիրի և ընթերցանությունն իր նպատակին չի ծառայի:Այս կերպ հնարավոր չէ սեր արթնացնել ընթերցանության նկատմամբ:

ԽՄԲԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հաշվի առնելով վերը նշվածը,ես դասարանում ձևավորում եմ ընթերցանության տարբեր մակարդակների խմբեր, որոնցից յուրաքանչյուրը կարդում է իր խմբի մակարդակին համապատասխան գիրք և որ շատ կարևոր է ,խմբերն ընթերցանության պրոցեսն ավարտում են միաժամանակ, որը հնարավորություն է տալիս խուսափել ավելորդ աղմուկից:Երբ խմբերն արդեն ձևավորված են ,ես անցնում եմ հաջորդ քայլին.յուրաքանչյուր խմբին եմ ներկայացնում նախօրոք ընտրված գիրքը,որն իմ կարծիքով համապատասխանում է խմբի անդամների ընթերցանության մակարդակին:Այնուհետև նախապատրաստում եմ խմբերին հաջողությամբ իրականացնելու ընթերցումը:

Քանի որ այս անգամ ընտրել եմ անգլիացի հեքիաթասաց Դոնալդ Բիսեթի հեքիաթները,սկզբից ներկայացնում եմ գիրքը, հեղինակին, ընտրված հեքիաթների

վերնագրերը,խոսում նկարիչ –պատկերազարդողի մասին:Թերթում եմ գիրքը,ցուցադրում առաջին էջը,ո՞վ կամ ի՞նչ է պատկերված առաջին էջում,ցուցադրում եմ նկարները:Աշակերտներն արդեն որոշակի տեղեկություններ ունեն հեղինակի,նրա մի քանի հեքիաթների մասին, որոնք զետեղված են մայրենիի դասագրքերում:Աշակերտներին զարմացնում է այն, որ Դոնալդ Բիսեթը լինելով թատրոնի և կինոյի դերասան,միաժամանակ նկարներ է նկարում , այնուհետև ցուցադրելով հեռուստացույցով,որպես բացատրություն հորինում է հեքիաթներ և պատմում:Իսկ հեքիաթներն իսկապես լավն են և դուր են գալիս երեխաներին:Դրանք հետաքրքիր են,երևակայությունը շարժող,իսկ դեպքերը տեղի են ունենում ոչ ստանդարտ իրավիճակներում:Հենց այդ պատճառով էլ այս անգամ ընտրել եմ նրա հեքիաթները:

Ընդհանուր ձևով կատարած այս աշխատանքից հետո խմբերն ստանում են իրենց գրքերը և պատրաստվում կարդալու:Ընտրելով հինգ տարբեր հեքիաթներ թե՛բովանդակության,թե՛ կերպարների, դեպքերի հաջորդականության և թե՛ ավարտի առումով,ես ակնկալում եմ ,որ իմ աշակերտները խմբում կկարդան մի հեքիաթ, բայց դասի վերջում ՝խմբային աշխատանքների ներկայացման ժամանակ,կծանոթանան ևս չորս հետաքրքիր հեքիաթների և անպայման կշահագրգռվեն մեկ անգամ ևս դրանք ինքնուրույն կարդալու:Արդյունքում կստացվի,որ նրանք մեկ դասաժամի ընթացքում կլսեն հինգ հեքիաթ:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԸ

Ես որոշում եմ ,թե որքան ժամանակ եմ հատկացնելու խմբերին ընթերցանության համար՝նախօրոք հաշվի առնելով ,թե ինչ բարդության կամ ինչ ծավալի տեքստ եմ հանձնարարում յուրաքանչյուր խմբին, օրինակ՝10 կամ 15 րոպե:Խմբին, որն արագ և վարժ է ընթերցում,տալիս եմ ծավալուն տեքստ,խմբին, որ դանդաղ է կարդում՝քիչ ավելի փոքր տեքստ:Ովքեր դժվարությամբ են կարդում,նրանց տեքստն ավելի պարզ է ու մատչելի և այսպես բոլոր խմբերը ստանում են իրենց հեքիաթները:Արդյունքում ես ակնկալում եմ ,որ խմբերը միաժամանակ կվերջացնեն ընթերցումը և կանցնեն հաջորդ առաջադրանքին:Աշակերտները կարդում են <<Մրջյունն ու շաքարը>>,<<Բզեզի և բուլդոզերի մասին>>,<<Փոքրիկ վագր Բինքիի մասին, որի շերտերն անհետացել

էին>>,<<Աշխարհը շուռ է եկել>>,<<Դեյզիի ճանապարհորդությունը դեպի Ավստրալիա>>հեքիաթները:

ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Աշակերտների ընթերցելու ժամանակ ես մոտենում եմ խմբերին,նրանց ուշադրությունն եմ հրավիրում այն մանրամասների վրա ,որոնք երեխաների համար կարող են դժվարություն ներկայացնել.օրինակ՝բառաշարքը, քերականական առանձնահատկությունները,իմաստը, կերպարների վերլուծությունը:Երբեմն ես խմբերին մոտենում եմ միայն այն դեպքերում,երբ իմ օգնության կարիքը կա:Սակայն հնարավոր է նաև ,որ իմ օգնության կարիքը չզգացվի,քանի որ ընտրված գիրքը լիովին համապատասխանում է խմբի երեխաների մակարդակին և աշակերտներն ի վիճակի են ինքնուրույն հաղթահարել բարդությունները:Սա շատ կարևոր է , որովհետև եթե գիրքը բարդ է երեխայի համար,նա կարող է վհատվել,դրանով իսկ խուսափել կարդալուց:Այս անգամ ես նպատակահարմար եմ գտնում խմբերին բացատրել **հեծկլտալ, սողոսկել, անողոք, աղիողորմ,թուջ, բուտերբրոտ** բառերի իմաստը,ուրիշի ուղղակի խոսքի գրության առանձնահատկությունները, հատուկ անունները:Աշակերտներն այս ընթացքում շարունակում են կարդալ:Երբ խմբերը համարյա միաժամանակ ավարտում են ընթերցանությունը, ես երկու րոպե ժամանակ եմ տալիս աշակերտներին խմբի ներսում մտքեր փոխանակելու իրար հետ

կարդացածի շուրջ, որից հետո նրանց սեղաններին եմ դնում նախօրոք պատրաստված առաջադրանքները:

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Առաջադրանքների հաջող կատարման համար ես օգտվում եմ մի ռազմավարությունից, որը կոչվում է համագործակցային ուսուցում:Աշակերտներն աշխատում են միասին և զգում են ,որ տվյալ աշխատանքը կատարելիս իրենք միմյանց կարիքն ունեն:Նրանք խոսում են, լսում են իրար, օգնում,մտքեր փոխանակում,քննարկում են և իրարից սովորում:Աշխատելու ընթացքում երեխաները ցուցաբերում են շահագրգռվածություն և ավելի խորը գիտելիքներ:Վերջում նրանք տվյալ առաջադրանքի հարցում հանգում են մեկ ընդհանուր եզրակացության:Աշխատանքի ընթացքում ես հետևում եմ , որպեսզի երեխաները պահպանեն համագործակցությամբ աշխատելու բոլոր կանոնները՝միաժամանակ կարգավորելով միջավայրի աղմուկը:Դրա համար օգտագործում եմ << **ոչ մի ձայն կանոնը**>>,<<**6 սմ բարձրության ձայն**>>,<<**Հարցրու**

3 հոգու, **հետո ինձ**>> ռազմավարությունները: Աշխատելու ընթացքում ես դիտարկում եմ երեխաներին, թե ինչպիսի՞վարք են նրանք դրսևորում խմբում,ինչպես՞են հաղորդակցվում իրար հետ,ինչպես՞ են աշխատում ,ինչպես՞են օգնում իրար:Շատ եմ կարևորում երեխայի ջանքերը, գնահատում եմ նրա աշխատանքն անկախ այն բանից, թե ինչքան՞է նա աշխատել խմբում,մյուսներից շա՞տ ,թե՞քիչ:Կարևորը խմբի յուրաքանչյուր անդամին ավելի ուժեղ և ինքնուրույն դարձնելն է :Աշակերտները սովորում են միասին ,որպեսզի հետագայում հանդես գան որպես ուժեղ անհատներ:Տեղին է մեջբերել Լև Վիգոտսկու

հետևյալ միտքը՝<<Այն, ինչ այսօր երեխաները կարող են անել միասին, վաղը նրանք դա կանեն միայնակ>>:



:

ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ ԽՄԲԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻՑ

Ես ընտրում եմ բազմազան առաջադրանքներ, որոնց միջոցով ցանկանում եմ պարզել,թե ինչպե՞ս է անցել ընթերցանությունը:Բացի այն, որ ես ուզում եմ դաստիարակել ընթերցանություն սիրող,սահուն և արտահայտիչ կարդացող աշակերտներ,իմ առջև նպատակ եմ դնում նաև պարզել, թե ի՞նչ ակադեմիական գիտելիքներ ձեռք կբերեն երեխաներն այս ընթերցանությունից և ի՞նչ հմտություններ կձևավորվեն նրանց մոտ:Առաջադրանքներն այս անգամ իրենց մեջ ներառում են գրավոր շարադրանքներ, բնութագրող բառեր, կերպարների վերլուծություն, նկարազարդումներ, քարտեզագրություն, գովազդ և անգամ փոքրիկ բեմականացում:

Այսպես՝I խումբ

1. Գրե՛ք, թե ի՞նչը զարմացրեց ձեզ այս հեքիաթում:
2. Ներկայացրե՛ք (նկար) ամենից զվարճալի հատվածը:

II խումբ

1. Գրե՛ք ,թե ի՞նչ սովորեցիք այս հեքիաթից և ինչպե՞ս եք պատրաստվում այն օգտագործել կյանքում:
2. Պատկերե՛ք գլխավոր հերոսին մինչև շաքարավազ ուտելը և դրանից հետո:

III խումբ

1. Երեք նախադասությամբ ամփոփե՛ք հեքիաթը:
2. Նկարազարդե՛ք ձեզ դուր եկած հատվածը:

IV խումբ

1. Գրե՛ք հեքիաթի հերոսների միջև ստեղծված պայքարի մասին:
2. Կազմե՛ք հեքիաթի ճամփորդական պլակատը և ներկայացրե՛ք:

V Խումբ

1. Ներկայացրե՛ք հեքիաթի ամենահուզիչ հատվածը:
2. Երկու նկար նկարե՛ք, համառոտ գրե՛ք դրանց բովանդակությունը:

ա) Սպիտակ խոհանոցը

բ) Վագրիկը, որը շերտեր չուներ

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Առաջադրանքների համար նույնպես հատկացնում եմ ժամանակ և հետևում ժամանակին:Այնուհետև գալիս է խմբային աշխատանքների ներկայացման պահը, որը նույնպես ունի իր նպատակը:Ներկայացման ժամանակ խմբերն աշխատում են իրենց բաժին ընկած հեքիաթն այնպես ներկայացնել ամբողջ դասարանին,որ բոլորի մոտ ցանկություն առաջանա կարդալու նաև մյուս խմբերի հեքիաթը:Նրանք պատմում են հեքիաթը, բնութագրում հերոսներին, նշում կարևոր իրադարձություններն ու ցուցադրում իրենց նկարներն ու գրածները:Դասարանում տիրում է աշխույժ, շահագրգռվածության մթնոլորտ, որտեղ յուրաքանչյուր երեխա ուզում է կարդալ:

Խմբային աշխատանքների ժամանակ չեմ մոռանում գնահատել աշակերտներին:Օրինակ՝ես տեսա, որ ձեր խումբը

ա) խոսում է հանգիստ և հերթով

բ) մեկը լսում է մյուսին

գ) միասին աշխատեցիք մինչև վերջ

դ) օգնում էիք իրար

ե) խոսում էիք այն մասին ,թե ինչպե՞ս աշխատեցիք և ի՞նչ կարող էիք անել և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մնում է , որ մենք՝ ուսուցիչներս բարձր ակնկալիքներ ունենանք յուրաքանչյուր աշակերտից, հավատանք, որ յուրաքանչյուր աշակերտ կարող է հասնել հաջողության:ՈՒրեմն կազմակերպենք ինքնուրույն ընթերցանության դասերն այնպես, որ դրանք հաճույք պատճառեն երեխաներին, դարձնեն նրանց ավելի փորձառու և բավականություն պատճառեն նրանց:

Գրականության ցանկ

1. <<Քայլ առ քայլ>> բարեգործական հիմնադրամ,
   Բաց հասարակություն ինստիտուտի համագործակցությամբ
   Քեյթ Բըրք ՈՒոլշ <<Մանկակենտրոն դասարանների ստեղծումը>>-ձեռնարկ
   Թեմա-Ընթերցանության հավասարակշռված ծրագիր
2. <<Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով>>- ձեռնարկ.<< Կերտում ենք խոհուն ընթերցողներ>>
   Հեղինակ՝Ջինի Լ.Սթիլ, Քուրթիս Ս.Մերեդիթ և Չարլզ Թեմփլ
3. Համագործակցային ուսուցման ձեռնարկ- Երևան <<Անտարես>> 2006թ.
   Հեղինակներ՝Ա.Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյան և ուրիշներ.
4. Ջ.Գյուլամիրյան ՝ Արտադասարանային ընթերցանությունը որպես քննադատական մտածողության արդյունավետ ուղի.
5. Քննադատական մտածողությունը որպես ինքնուրույն մտածողության ձևավորման պայման.
6. Քննադատական մտածողությանը նպաստող ակտիվ մեթոդների կիրառումը մայրենիի դասերի ընթացքում.
7. Սեփական փորձ.